## *1.2 Արտադրություն (ծառայություններ)*

### *1.2.1. Արդյունաբերություն*

*Արդյունաբերական արտադրանքի ծավալը և իրացումը:* 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում, արդյունաբերական 1958 կազմակերպություններից ստացված հաշվետվությունների տվյալների, ինչպես նաև ամենամսյա վիճակագրական մոնիտորինգում չընդգրկված տնտեսավարող փոքր ձեռնարկատիրության սուբյեկտների գործունեության գնահատման (ըստ ցածր առաձգականությամբ ապրանքների արտադրության բազային ցուցանիշի), ընթացիկ գներով, թողարկվել է 265164.0 մլն. դրամի արդյունաբերական արտադրանք, իրացվել է 258350.0 մլն դրամի արտադրանք, այդ թվում ԱՊՀ երկրներում՝ 26090.7 մլն. դրամի, այլ երկրներում՝ 61013.2 մլն. դրամի արտադրանք:

2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկա-կան ծավալի ինդեքսը կազմել է 119.2%, իսկ արդյունաբերական արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսն առանց էլեկտրաէներգիայի,գազի,ջրի արտադրության և բաշխման՝ 121.7%:

**Արդյունաբերական արտադրանքի ծավալի դինամիկան**
**2001թ. դեկտեմբերի նկատմամբ,%**




**Արդյունաբերական արտադրանքի դինամիկան, %**

| | Նախորդ ամսվա նկատմամբ | Նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ | Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ |
|---|---|---|---|
| | *2002 թվական* | | |
| հունվար | 71.7 | 107.1 | 71.7 |
| փետրվար | 100.9 | 104.5 | 72.3 |
| մարտ | 116.4 | 116.9 | 84.2 |
| ապրիլ | 88.1 | 115.6 | 74.2 |
| մայիս | 95.2 | 107.3 | 70.6 |
| հունիս | 103.7 | 115.8 | 73.2 |
| հուլիս | 114.4 | 104.6 | 83.7 |
| օգոստոս | 96.0 | 96.1 | 80.4 |
| սեպտեմբեր | 102.7 | 116.1 | 82.6 |
| հոկտեմբեր | 108.3 | 137.4 | 89.5 |
| նոյեմբեր | 94.8 | 123.7 | 84.8 |
| դեկտեմբեր | 127.1 | 100.3 | 107.8 |
| | *2003 թվական* | | |
| հունվար | 78.9 | 109.9 | 78.9 |
| փետրվար | 99.1 | 105.7 | 78.2 |
| մարտ | 105.5 | 115.5 | 82.5 |
| ապրիլ | 94.9 | 126.2 | 78.3 |
| մայիս | 96.4 | 136.0 | 75.5 |
| հունիս | 117.6 | 119.7 | 88.8 |
| հուլիս | 97.9 | 110.5 | 86.9 |
| օգոստոս | 103.4 | 127.7 | 89.9 |

**Արդյունաբերական արտադրանքի արտադրությունը**

ըստ տնտեսական գործունեության տեսակների[1]

| | Արտադրանքի (աշխատանքնե-րի, ծառայու-թյունների) ծա-վալը, ընթացիկ գներով[2],մլնդրամ | Պատրաստի արտադրան-քի իրացումը, ընթացիկ գներով[2], մլն դրամ | 2003թ. հունվար-օգոստոսի արտադրանքի (աշխատանք-ների, ծառայությունների) ֆի-զիկական ծավալի ինդեքսը 2002թ. հունվար–օգոստոսի նկատմամբ (համադրելի գներով), % |
|---|---|---|---|
| Ամբողջ արդյունաբերությունը | 265164.0 | 258350.0 | 119.2 |
| *այդ թվում՝* | | | |
| *էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում* | 64141.0 | 64141.0 | 109.6 |
| *դրանից՝* | | | |
| էլեկտրաէներգիայի, գազի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 59865.7 | 59865.7 | 111.0 |
| *որից՝* | | | |
| էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում | 54735.2 | 54735.2 | 108.5 |
| գազակերպ վառելիքի արտադրություն և բաշխում | 5130.5 | 5130.5 | 147.9 |
| ջրի հավաքում, մաքրում և բաշխում | 4275.3 | 4275.3 | 93.0 |
| *հանքագործական արդյունաբերություն* | 29290.0 | 21592.3 | 107.7 |
| *որից՝* | | | |
| մետաղե հանքաքարերի արդյունահանում | 27790.3 | 20087.0 | 106.6 |
| հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր | 1499.7 | 1505.3 | 132.8 |
| *մշակող արդյունաբերություն* | 171733.0 | 172616.7 | 123.6 |
| *որից՝* | | | |
| սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրություն | 86861.0 | 86752.9 | 114.7 |
| ծխախոտային արտադրատեսակների արտադրություն | 8812.6 | 8137.5 | 137.1 |
| մանածագործական արտադրություն | 1184.5 | 1179.5 | 121.6 |
| հագուստի արտադրություն, մորթու մշակում և ներկում | 1340.0 | 1257.0 | 112.0 |
| կաշվի, կաշվե արտադրատեսակների և կոշկեղենի արտադրություն | 141.5 | 146.7 | 51.0 |
| բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն | 1015.9 | 1089.6 | 111.9 |
| հրատարակչական գործ, տպագրական գործ, տեղեկատվական նյութերի վերարտադրում | 3505.3 | 3434.4 | 111.7 |
| քիմիական արդյունաբերություն | 4118.6 | 3693.0 | 76.6 |
| ռետինե և պլաստմասսայե արտադ-րատեսակների արտադրություն | 845.9 | 761.1 | 225.3 |
| այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն | 8294.9 | 8304.0 | 133.7 |
| մետաղագործական արդյունաբերություն | 28521.5 | 31827.8 | 117.4 |
| պատրաստի մետաղե արտադրատե-սակների արտադրություն | 2273.4 | 2018.2 | 146.0 |
| մեքենաների և սարքավորանքի արտադրություն | 3141.1 | 3092.2 | 125.9 |
| ոսկերչական արտադրատեսակների արտադրություն | 14652.0 | 13778.9 | 137.4 |
| գործունեության այլ տեսակներ | 7024.8 | 7143.9 | 149.7 |

*[1] Արդյունաբերական արտադրանքի արտադրության վերաբերյալ տեղեկատվությունը, ըստ տնտեսական գործունեության տեսակների, առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներն ըստ տնտեսական գործունեության տեսակների» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր 1210-201):*

*[2] Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*

## Արդյունաբերական արտադրանքի կառուցվածքն ըստ արտադրության բաժինների, 2003թ. հունվար-օգոստոսին




## Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրություն և բաշխում




## Էլեկտրաէներգիայի, տաք ջրի և գոլորշու արտադրություն և բաշխում




Հանքագործական արդյունաբերություն




Մշակող արդյունաբերություն




2003թ. հունվար-օգոստոսին արտադրված (հաշվառվող) 107 հիմնական արտադրատեսակներից (բնեղեն արտահայտությամբ) 69-ի գծով ձեռք է բերվել կամ գերազանցվել 2002թ. նույն ժամանակաշրջանի արտադրության մակարդակը, այդ թվում արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի 56–ից 35-ի և սպառողական ապրանքների՝ 51-ից 34-ի գծով:

**Սպառողական ապրանքների արտադրության ծավալները**[1]

*(մլն դրամ)*

| | Փաստացի թողարկումը հունվար-օգոստոսին | | Արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը, % |
|---|---|---|---|
| | 2003թ. | 2002թ.[2] | |
| Սպառողական ապրանքներ, ընդամենը | 110109.6 | 92851.6 | 118.6 |
| *այդ թվում՝* | | | |
| պարենային ապրանքներ | 61191.9 | 55900.7 | 109.5 |
| ալկոհոլային խմիչքներ (ներառյալ գարեջուրը) | 22303.8 | 17776.1 | 125.5 |
| ոչ պարենային ապրանքներ, ընդամենը | 26613.9 | 19174.8 | 138.8 |
| *այդ թվում՝* | | | |
| թեթև արդյունաբերության[3] | 6997.2 | 6015.9 | 116.3 |
| մշակութակենցաղային և տնտեսական նշանակության | 19616.7 | 13158.9 | 149.1 |

[1] *Հաշվարկված են առանց ավելացված արժեքի և ակցիզային հարկերի:*
[2] *2002թ.սպառողական ապրանքների արտադրության ծավալը հաշվարկված է 2003թ.գներով:*
[3] *Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

Ընդհանուր առմամբ, 2003թ. հունվար-օգոստոսին հանրապետությունում թողարկվել է 3651.2 մլն.կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 97.3 %-ը: Ընդ որում, ՋԷԿ-երում արտադրված էլեկտրաէներգիան ավելացել է 67.5 %-ով, ՀԷԿ-երում՝ 23.4% -ով, իսկ ՀԱԷԿ-ում նվազել է 44.3% -ով:

2003թ.հունվար-օգոստոսին ՀԱԷԿ-ը թողարկել է 1071.1 մլն.կՎտ ժամ էլեկտրաէներգիա, որը կազմել է հանրապետությունում թողարկված ողջ էլեկտրաէներգիայի 29.3%-ը, ՋԷԿ-երը, համապատասխանաբար, 1215.7 մլն. կՎտ ժամ և 33.3%-ը, ՀԷԿ-երը՝ 1364.4 մլն. կՎտ ժամ և 37.4%-ը: 2003թ. հունվար-օգոստոսին հանրապե-տությունում թողարկվել է 268.1 հազ.Գկալ ջերմային էներգիա, որը կազմել է 2002թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշի 122.7%:

*Սննդամթերք,ներառյալ խմիչքներ և ծխախոտ* արտադրող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները[1]

| | 2003 թ. հունվար-օգոստոս | 2002 թ. հունվար-օգոստոս | 2003թ. հունվար-օգոստոսը 2002 թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Միս[2], տոննա | 23873 | 21334 | 111.9 |
| Մսամթերք, ներառյալ երշիկեղեն, տոննա | 788.4 | 842.1 | 93.6 |
| Պանիր[2], տոննա | 3291 | 3145 | 104.6 |
| Պաղպաղակ, տոննա | 1153.3 | 988.7 | 116.6 |
| Կաթ և կաթնամթերք (վերահաշվարկված կաթի)[2], տոննա | 183720 | 160751 | 114.3 |
| Պահածո, հազ. պայմ. բանկա | 26944.1 | 21128.6 | 127.5 |
| Ալյուր, տոննա | 84537 | 69207 | 122.2 |
| Ձավարեղեն, տոննա | 8.1 | 9.0 | 90.0 |
| Հաց և հացամթերք, տոննա | 196362 | 196756 | 99.8 |
| Հրուշակեղեն, տոննա | 2172.8 | 1376.3 | 157.9 |
| Մակարոնեղեն, տոննա | 654.9 | 705.3 | 92.9 |
| Բուսական յուղ, տոննա | 1705.1 | 1320.2 | 129.2 |
| Օղի և օղու-լիկյորի արտադրանք , հազ. լիտր | 6116.4 | 5269.0 | 116.1 |
| Կոնյակ, հազ. լիտր | 4175.9 | 3434.0 | 121.6 |
| Խաղողի գինի, հազ. լիտր | 1084.6 | 1012.7 | 107.1 |
| Շամպայն գինի, հազ.լիտր | 301.8 | 227.0 | 133.0 |
| Գարեջուր, հազ. լիտր | 5209.6 | 5019.6 | 103.8 |
| Ոչ ալկոհոլային ըմպելիքներ, հազ. լիտր | 20458.6 | 15845.9 | 129.1 |
| Բնական հյութեր, հազ.լիտր | 2808.0 | 1355.0 | 2.1անգամ |
| Հանքային ջրեր, հազ. 0.5 լ շիշ | 25297.1 | 23347.3 | 108.4 |
| Աղ, տոննա | 18791.9 | 16927.0 | 111.0 |
| Սիգարետներ, մլն.հատ | 1952.1 | 1579.8 | 123.6 |
| Ֆերմենտացված ծխախոտ, տոննա | 1310.8 | 861.5 | 152.2 |

*Մանածագործական և կարի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2003 թ. հունվար-օգոստոս | 2002 թ. հունվար-օգոստոս | 2003թ. հունվար-օգոստոսը 2002 թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Բամբակյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 156.2 | 386.9 | 40.4 |
| Բրդյա գործվածքներ, հազ. $մ^2$ | 14.3 | 10.1 | 141.6 |
| Գորգեր և գորգեղեն, $մ^2$ | 14931 | 11178 | 133.6 |
| Գուլպեղեն, հազ. զույգ | 206.0 | 293.4 | 70.2 |
| Տրիկոտաժեղեն, հազ. հատ | 1844.6 | 1280.5 | 144.1 |
| Կարի արտադրանք[3], մլն. դրամ | 5800.0 | 5394.4 | 107.5 |

[1] *Այստեղ և հետայսու բերված տեղեկատվությունը առավել մանրամասն զետեղված է «Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ» վիճակագրական տեղեկագրում (ծածկագիր՝ 1210-202):*

[2] *Ներառյալ գյուղացիական տնտեսությունների կողմից վերամշակումը (բացառությամբ ներքին սպառումը):*

[3] *Ներառյալ պատվիրատուի հումքի և նյութերի արժեքը (որոնց համար արտադրող կազմակերպությունը չի վճարում):*

2003թ. հունվար-օգոստոսին *քիմիական* արդյունաբերության հիմնական արտադրատեսակներից պլաստմասսայից իրերի արտադրությունը 2002թ. համապատասխան ժամանակաշրջանի համեմատ ավելացել է` 62.7%-ով, քիմիկա-դեղագործական արտադրանքինը` 35.1%-ով, լաքաներկանյութերինը` 26.9%-ով, իսկ սինթետիկ կաուչուկի և կաուստիկ սոդայի արտադրությունները նվազել են, համապատասխանաբար, 63.4 և 58.5%-ով:

*Ոչ մետաղական հանքային* արտադրատեսակների արտադրությամբ և *հանքարդյունահանմամբ* զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2003 թ. հունվար-օգոստոս | 2002 թ. հունվար-օգոստոս | 2003թ. հունվար-օգոստոսը 2002թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Հավաքովի երկաթբետոնե կառուցվածքներ, $մ^3$ | 16538 | 13218 | 125.1 |
| Ապրանքային բետոն, $մ^3$ | 34019 | 13557 | 2.5 անգամ |
| Երեսպատման սալեր բնական քարից, $մ^2$ | 43020 | 42651 | 100.9 |
| Ոչ հանքային շինանյութեր, $մ^3$ | 216247 | 140124 | 154.3 |
| Կիր, տոննա | 2152.0 | 2962.0 | 72.7 |
| Ցեմենտ, հազ. տոննա | 228.1 | 207.1 | 110.1 |
| Գաջ, տոննա | 38405 | 25068 | 153.2 |
| Կանոնավոր կտրվածքի տուֆ, $մ^3$ | 45741 | 41715 | 109.7 |
| Ծակոտկեն լցանյութեր, $մ^3$ | 79864 | 53390 | 149.6 |
| Ալյումինե և մետաղապլաստիկ իրեր, $մ^2$ | 20144 | 6171 | 3.3 անգամ |

*Մետաղագործական* արդյունաբերության կազմակերպությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանում 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ալյումինե գլանվածքի արտադրությունն ավելացել է 20.4 անգամ, ալյումինե փայլաթիթեղինը` 2.9 անգամ, պղնձե խտանյութում պղնձինը` 11.6%-ով, իսկ կոնվերտորային (սև) պղնձի արտադրությունը նվազել է 1.8%-ով:

*Պատրաստի մետաղե արտադրատեսակների, մեքենաների և սարքավորանքի ու էլեկտրական մեքենաների և էլեկտրասարքավորանքի* արտադրությամբ զբաղվող կազմակերպությունների թողարկած հիմնական արտադրատեսակները

| | 2003 թ. հունվար-օգոստոս | 2002 թ. հունվար-օգոստոս | 2003թ. հունվար-օգոստոսը 2002 թ. հունվար-օգոստոսի նկատմամբ, % |
|---|---|---|---|
| Մետաղահատ հաստոցներ, հատ | 160 | 179 | 89.4 |
| Ռելեներ, հազ. հատ | 184.1 | 230.7 | 79.8 |
| Ուժային ճկուն կաբելներ, կմ | 3.0 | 3.2 | 93.8 |
| Ուժային կաբելներ մինչև 1 կվ լարման համար, կմ | 1.9 | 37.1 | 5.1 |
| Տեղակայման հաղորդալարեր, կմ | 61.2 | 673.7 | 9.1 |
| Լուսավորման էլեկտրալամպեր, հազ. հատ | 3853.3 | 5509.4 | 69.9 |
| Փոքր հզորության էլեկտրաշարժիչներ, հատ | 2365 | 1984 | 119.2 |
| 63-355 մմ բարձրությամբ պտտման առանցքով փոփոխական հոսանքի էլեկտրաշարժիչներ, հատ | 171 | 261 | 65.5 |
| 0.5-100 կվտ հզորության փ/հ գեներատորներ, հատ | 12 | 50 | 24.0 |
| Ուժային տրանսֆորմատորներ, հատ | 18 | 20 | 90.0 |
| Համակարգիչներ, հատ | 1277 | 875 | 145.9 |
| Ջրային հաշվիչներ, հատ | 180354 | 3726 | 48.4 անգամ |
| Սառնարանային ցուցափեղկեր, հատ | 44 | - | - |
| Պոմպեր, հատ | 984 | 270 | 3.6 անգամ |